

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼՂՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՐՈՒՄ

Ա. Միրզոյան

տնտեսագիտական գիտությունների ամբիոն

Ներդրումների տակ հասկանում ենք շահույթի ստացման նպատակով տնտեսական գործունեության զանազան օբյեկտներում և գործիքներում տարբեր եղանակներով և ձևերով կապիտալի ներդրում, ինչպես նաև այլ տնտեսական կամ ոչ տնտեսական արդյունքի ստացում, որը կապված է ժամանակային, ռիսկային և իրավունքային գործոնների հետ: Ներդրումները կարելի է դիտարկել որպես տնտեսական կառավարման օբյեկտ: «Ներդրումներ» կառուցողի կապված է տնտեսական հարաբերությունների և գործունեության ոլորտի հետ: Այն կուտակված կապիտալի ներգրավման առավել ակտիվ միջոց է: Ընկերության ներդրումային գործունեությունն իրենից ներկայացնում է անհրաժեշտ ներդրումային պաշարների ձրոնման, ներդրումային արդյունավետ օբյեկտների ընտրության, ընտրված չափանիշներով ներդրումային ծրագրի մշակման և դրա իրագործման նպատակային քայլերի հաջորդականությունը: Ներդրումային գործունեությունը ընկերության տնտեսական ռազմավարության իրականացման և տնտեսական աճի ապահովման գլխավոր ձևն է: Ընկերության տնտեսական զարգացման բոլոր խնդիրները պահանջում են ընկերության ակտիվների կազմի թարմացում և ընդլայնում:

Ընկերության ներդրումային գործունեության ծավալներով կարելի է բնութագրել նրա տնտեսական զարգացման տեմպերը: Դրա համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝ համախառն ներդրումների ծավալը և գուտ ներդրումների գումարը: Համախառն ներդրումներն իրենցից ներկայացնում են որոշակի ժամկետներում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների ընդլայնմանը կամ համալրմանն ուղղված ներդրումների ընդհանուր գումարը: Ձուտ ներդրումները իրենցից ներկայացնում են համախառն ներդրումների գումարի և օգտագործման ժամանակաշրջանի համար ամորտիզացիայի մասնաճիւղների տարբերությունը:

Ձուտ ներդրումների դինամիկան արտացոլում է ընկերության տնտեսական զարգացման բնույթը, շահույթի ձևավորման ներուժը: Եթե գուտ ներդրումների գումարը կազմում է բացասական մեծություն, ապա դա վկայում է ընկերության արտադրական ներուժի պակասման մասին: Եթե համախառն ներդրումները հավասար են ռադիոկազմի մասնաճիւղների գումարին, ապա դա նշանակում է, որ գոյություն չունի ընկերության տնտեսական ներուժի և շահույթի բազայի աճ: Եթե գուտ ներդրումների գումարը կազմում է դրական մեծություն, ապա դա նշանակում է, որ ազատվելով է ընկերության ակտիվների ընդլայնված վերաբաղությունը և շահույթի ձևավորման տնտեսական բազայի աճը: Իսկ դա տնտեսական աճի հիմնական գրավականն է [1]:

Վերջին տարիների ընթացքում սկզբունքորեն վերանայվեց հարկային քաղաքականությունը՝ թեթևացնելով հարկային բեռը շահութաձեռքի, նկատառարկի, հողի հարկի, սոցիալական պարտադիր վճարների գծով, այսինքն այն հարկատեսակների, որոնք ուղղակիորեն կապված են նվաճության և տնտեսական արտադրողների նկատմանների հետ, սակայն կատարելագործված չէ հարկային վարչարարությունը:

Անաջիկա տարիներին ԼՂՀ-ի հարկային քաղաքականության առանցքային ուղղությունը պետք է հանդիսանա այնպիսի հարկային համակարգի կառուցումը, որը կստեղծի տնտեսական աճի բարձր և կայուն տեմպերի, ներդրումների իրականացման և տնտեսության արտադրողի ճյուղերի զարգացման համար բարենպաստ միջավայր, ինչն իր հերթին կապահովի նոր աշխատատեղեր և բնակչության կենսամակարդակի բարձրացում:

Ներդրումային քաղաքականությունը իրականացվում է պետական ձեռնարկությունների անվանաշարքի մեջ գործընթացին զուգընթաց: Այս ոլորտում մշակվել են նոր մոտեցումներ և ձևեր՝ ընդհուպ մինչև անվանաշարքի օբյեկտի ուղղակի անհատույց տրամադրումը: Պետական ձեռնարկությունների մասնավորեցումը անցումային տնտեսություն ունեցող երկրների նրկարտադրական զարգացման կարևորագույն քաղաքական մասն է:

ԼՂՀ-ում 2004թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցվել է 45 ընկերություն, որից 12-ը ուղղակի անհատույց տրամադրման ձևով, որոնց անվանաշարքերը պարտավորվել են իրականացնել խոշոր ներդրումային ծրագրերը երաշխավորելով ավելի քան 600 նոր աշխատատեղերի ստեղծում:

Հանրապետությունում հիմնականում ավարտված է «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության 768 օբյեկտների ու 1998 թվականից սկսած հողերի սեփականաշնորհման գործընթացները [2]:

Արդյունաբերական արտադրության թագավորությունը պետք է կառուցվի տեխնոլոգիական և կառավարման նորամուծությունների արմատավորման հիման վրա: Ընդ որում, առաջնային և համարվում տեղական հումքի, վերամշակման, սնվածական հանքանյութային թնտիսման օգտագործման, գիտական ներուժի, նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված արտադրությունների հիմնումն ու զարգացումը:

Մեփական հանքահումքային թնտիսման հիման վրա նոր արտադրությունների ստեղծման ուղղությամբ օտարերկրյա ներդրումների հետ տարվում են բանակցություններ, առանձնապես ուկրաինական շաղախի բնագավառներում, որը կարևոր դեր կխաղա հանրապետության տնտեսության զարգացման համար:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ կառավարությունը պետք է ներդնի իր ակտիվ մասնակցությունը օտարերկրյա ներդրումների ուղղությամբ ներգրավվել գիտատար արտադրությունների կազմակերպման գործընթացին:

Ներդրումների տնտեսականից առաջնիկ տարիներին գերակայությունները պիտի տրվեն այն ծրագրերի զարգացմանը, որոնք ուղղված կլինեն

- արտադրման մեծացմանը,
- բարձրակարգ տեխնոլոգիաների ներդրմանը,
- ներքին գիտական ներուժի և բնական պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 6033.5 մլն դրամ, որից 1218.6 մլն դրամն իրականացվել է արդյունաբերությունում, 1333.0 մլն դրամը՝ գյուղատնտեսությունում, 1204.9 մլն դրամը՝ շինարարությունում, 819.6 մլն դրամը՝ առևտրում և 1457.3 մլն դրամը՝ այլ ճյուղերում:

Օտարերկրյա ներդրումներից հարկ է նշել հանրապետ շվեյցարական «Ֆրենկ Մյուլլեր» ընկերությունը, որը տնտեսության մի շարք ոլորտներում 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կատարել է մոտ 2.8 մլն ԱՄՆ դոլարի ներդրում՝ ոսկերչական իրերի արտադրության, քարաձևավորման, հյուրանոցային գործ, բանկային գործունեության բնագավառներում, ստեղծելով 235 աշխատատեղ: Աշխատանքներ են տարվում ներդրումներ կատարել ազատանդազորության բնագավառում:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում գործում է օտարերկրյա ներդրումներով 63 ընկերություն:

Զնայած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունում վերջին տարիների ընթացքում արժանագրված դրական միտումներին և տեղաշարժերին, պետք է արժանազան, որ զբաղվածության ոլորտում դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ:

Զննարկատիրության բնագավառում կարևոր է հանրապետությունում գործարար ակտիվության խթանումը, տնտեսվարող սուբյեկտների ինքնուրույնության ընդլայնումը: Այն ներկա փուլում հիմնականում պիտի կողմնորոշվի տնտեսության մասնավորապես ճյուղերում փոքր և միջին ձևերի կազմակերպությունների առաջնահերթ զարգացմանը, համապատասխան նյութակառուցվածքների ստեղծմանը:

Փոքր և միջին ձևերի կազմակերպությունները յուրաքանչյուր ներքին տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: Փոքր և միջին ձևերի կազմակերպության զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմել անցումային տնտեսությունների բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները, կայուն պայմաններ ստեղծելով հետագա տնտեսական աճի համար: Տնտեսական բարեփոխումների և շուկայական տնտեսության անցման ամբողջ ժամանակահատվածում ԼՂՀ-ում, ըստ էության, բացակայել է փոքր և միջին ձևերի կազմակերպությունների զարգացման նպատակային պետական քաղաքականությունը: Այսօր առաջնահերթ խնդիր է ոլորտի զարգացման համակարգված պետական քաղաքականության իրականացումը՝ հիմնված ձևերի կազմակերպության զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման վրա:

Փոքր և միջին ձևերի կազմակերպության սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները սահմանելու նպատակով մշակվել և 2001թ. ընդունվել է «Փոքր և միջին ձևերի կազմակերպության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքը:

Փոքր և միջին բիզնեսի ոլորտի տնտեսական աճի ապահովման պայմաններից է փոքր և միջին ձևերի կազմակերպությունների ֆինանսավարկային թնտիսման հասանելիության պարզեցումը:

Փոքր և միջին բիզնեսի աջակցության պետական ծները, ինչպես Յույց է տալիս համաշխարհային փորձը, տարբեր են: Դա բարենպաստ օրենսդրությունն է, հատուկ հարկային ձևերը, ֆինանսա-վարկային լծակները, պետական հիմնադրամների համակարգը: Հավանության է տրվում վարչարարական խաչընդոտների նկատելիորեն իջեցումը, որոնք խանգարում են բիզնեսի լրացմանը:

Նախորդ տարիներին աշխատանքներ էին տարվում, որպեսզի մասնավորեցումից ստացվող միջոցներ ուղղվեն ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորմանը, սակայն Լեոնային Ղարաբաղում բյուջեն ապակտորդային լինելու պատճառով հնարավոր չէր: Առաջին անգամ 2003թ. ԼՂՀ պետական բյուջեն (ներառյալ միջպետական վարկը) ընդունվեց առանց պաշտպանողի և հնարավոր դարձավ 2003թ. ընթացքում մասնավորեցումից ստացվող միջոցները լրիվությամբ ուղղել ՓՄՁ-ի զարգացմանը: ԼՂՀ ՓՄՁ-ի պետական քաղաքականության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար ստեղծվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում» հիմնադրամ: Սակայն այդ միջոցները քիչ են:

Իր գործունեության ընթացքում հիմնադրամը պետք է ձևավորի ֆինանսավորման երկրորդ աղբյուրը՝ վարկերը հետ ստանալու, փոխառությունների, վարկի դիմաց տոկոսի, արժեթղթերի նկատի, հաշվարկային հաշիվների դրույքաշահների տոկոսների ձևով:

Օրինակ՝ ՀՀ-ում բանակցություններ են վարվում միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ (Համաշխարհային բանկ (WB), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA), Գերմանիայի տեխնիկական համագործակցության կազմակերպություն (GTZ), Հունաստանի զարգացման նախարարություն և այլն) համատեղ ծրագրերի իրականացման նպատակով: Այդ շրջանակներում կիրականացվի ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցությունը, նրաշխիքների տրամադրումը [3]:

ԼՂՀ-ն միջազգային հանրության կողմից չճանաչված լինելու պատճառով զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնությունից: Ուստի բարձր դոնոր կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունը, հայկական սփյուռքը, արտասահմանյան գործարարները, բարեգործները:

Պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող ներդրումները գլխավորապես նպատակաուղղվում են համապատասխան ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը: Այդ ծրագրերը վերաբերում են ռազմավարական նշանակության և սոցիալական ոլորտի կարևորագույն օբյեկտների գործարկմանը: Դրանք կարող են լինել արտադրական ենթակառուցվածքի օբյեկտներ (էներգետիկական կայան, տրանսպորտի, կապի), ճանապարհներ, ջրաշինարարական նախարարություն, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ՝ կրթական, առողջապահական, մշակութային տարբեր համալիրներ, քաղաքաշինական ծրագրեր և այլն [4]:

ԼՂՀ-ում տնտեսական աճի արագ տեմպերի ապահովման, առկա տնտեսական ներուժի իրացման խաչընդոտները հիմնականում կապված են գործարար միջավայրի ոչ լիակատար ձևավորման հետ: Թերազդագրած են շուկա դուրս գալու և հետագա ձեռնարկատիրական գործունեության աջակցող ենթակառուցվածքները:

ԼՂՀ-ում գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման ռազմավարական նպատակը տնտեսության արդյունավետության որակական բարձրացումն է՝ հիմնական կապիտալում լայնածավալ ներդրումների իրականացման հիման վրա:

Ակնհայտ է, որ կապիտալ ներդրումների պահանջվող ծավալները և օրակը կարող են ապահովվել հիմնականում մասնավոր ներդրումների հիման վրա որոնց ակտիվությունն ուղղակիորեն կապված է գործարար և ներդրումային միջավայրի բարելավման հետ:

Մայրահիղ գածը մակարդակի վրա է ձեռնարկությունների ընդգրկվածությունը կրթության իրականացման և զարգացման մեջ: Այդ ուղղությամբ ներդրումներ չեն արվում:

Կրթության բովանդակության նորացման դանդաղ ընթացքը չի ապահովում ժողովրդավարացող հասարակության հոգևոր, տնտեսական ու սոցիալական առաջընթացը, քաղաքացու ձևավորումը, քաղաքացիական հասարակության կայացումը և իրավական պետության ստեղծումը: Կրթության ազատականացմանը և հումանիտարացմանը խաչընդոտում է անձի համակողմանի զարգացում և կրթությամբ ձեռք բերվող կիրառական որակներ ապահովող, շուկայական հարաբերությունների անցմանը միտված ծրագրերի և դասընթացների բացակայությունը կամ դանդաղ մուտքը կրթության համակարգ (քաղաքացիական կրթություն, տնտեսագիտության հիմունքներ, մաթոլի իրավունքներ, կյանքի հմտություններ, էկոլոգիական կրթություն և այլն):

Под инвестициями понимаем вложение капитала различными способами и методами объекты и инструменты экономической деятельности с целью получения прибыли, а также получение другого экономического и неэкономического результата, которое связано с факторами времени, риска и ликвидности.

Восстановление и развитие промышленности республики является первоочередной задачей для решения которой должны быть предприняты решительные шаги в направлениях оздоровления отдельных предприятий, снижения налогового бремени, привлечения иностранных инвестиций и кредитования прибыльных отраслей.

В ближайшие годы главным направлением налоговой политики должно быть построение такой налоговой системы, которая создаст благоприятную среду для высоких и стабильных темпов экономического роста, осуществления инвестиций и развития экспортных отраслей экономики.

Приватизация государственных предприятий – основная составляющая долгосрочного развития стран с переходной экономикой.

В сфере предпринимательства важно поощрение деловой активности, расширение самостоятельности хозяйствующих субъектов. Оно в настоящее время в основном должно быть ориентировано на первоочередное развитие малых и средних предприятий в приоритетных отраслях экономики, создание соответствующих инфраструктур.

Одним из условий экономического роста сферы малого и среднего бизнеса является упрощение получения финансово-кредитных ресурсов малыми и средними предприятиями.

На низком уровне находится привлечение предприятий в реализации и развитии образования. Медленное течение обновления содержания образования не обеспечивает духовного, экономического и социального прогресса демократического общества, формирования личности, гражданского общества и создания правового государства.

Ամփոփում

Ներդրումների տակ հասկանում ենք շահույթի ստացման նպատակով տնտեսական գործունեության զանազան օբյեկտներում և գործիքներում տարբեր եղանակներով և ձևերով կապիտալի ներդրում, ինչպես նաև այլ տնտեսական կամ ոչ տնտեսական արդյունքի ստացում, որը կապված է ժամանակային, ռիսկային և իրացվելիության գործոնների հետ:

Ընկերության ներդրումային գործունեության ծավալներով կարելի է բնութագրել նրա տնտեսական զարգացման տեմպերը:

Չուտ ներդրումների դինամիկան արտացոլում է ընկերության տնտեսական զարգացման բնույթը, շահույթի ձևավորման ներուժը:

Ձեռնարկատիրության բնագավառում կարևոր է հանրապետությունում գործարար ակտիվության խթանումը, տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության ընդլայնումը: Այն ներկա փուլում հիմնականում պիտի կողմնորոշվի տնտեսության նախապատվելի ճյուղերում փոքր և միջին ձեռնարկությունների առաջնահերթ զարգացմանը, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմանը:

Փոքր և միջին բիզնեսի ոլորտի տնտեսական աճի ապահովման պայմաններից է փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավարկային ռեսուրսներին հասանելիության պարզեցումը:

Մայրահեղ ցածր մակարդակի վրա է ձեռնարկությունների ընդգրկվածությունը կրթության իրականացման և զարգացման մեջ: Կրթության բովանդակության նորացման դանդաղ ընթացքը չի ապահովում ժողովրդավարացող հասարակության հոգևոր, տնտեսական ու սոցիալական առաջընթացը, քաղաքացու ձևավորումը, քաղաքացիական հասարակության կայացումը և իրավական պետության ստեղծումը:

Գրականություն

1. Брейли Р., Майерс С. “Приемы корпоративных финансов”: Пер. с англ. - Москва: ЗАО “Олимп-Бизнес”, 1997г.
2. Տվյալները՝ ըստ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության:
3. www.gov.am
4. Մեննջմենթ, Ուսումնական ձեռնարկ, Յու. Սուվարյանի խմբագր., Եր., Տնտեսագետ, 2002թ.: